# «ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Ժ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ ժողովրդի պատմության բուհական և դպրոցական դասագրքերում, ինչպես նաև առանձին ուսումնասիրություններում[1] բավական գունազարդված և հարթ ձևով է ներկայացված խորհրդային Հայաստանում անգրագիտության վերացումը։ Այսպես, հայ ժողովրդի պատմության բուհական դասագրքի «Կուլտուրական հեղափոխությունը Խորհրդային Հայաստանում 1920—1940 թթ.» գլխի հենց առաջին բաժնում, որը վերնագրված է «Պայքար անգրագիտության վերացման համար», կարդում ենք. «Կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ... 1940 թ. Սովետական Հայաստանը դարձավ համատարած գրագիտության հանրապետություն»[2]։ Իհարկե, չի կարելի ժխտել մշակույթի բնագավառում 1920—1940 թթ. հանրապետությունում կատարված դրական տեղաշարժերը, սակայն այսօր, երբ հրատապ է դարձել հայ ժողովրդի հատկապես խորհրդային շրջանի պատմության շատ հարցերի նորովի լուսաբանումը, փորձենք հանրապետությունում անգրագիտության վերացման դործը ներկայացնել այնպես, ինչպես եղել է և որի մասին տասնամյակներ շարունակ համառորեն չի խոսվել։

1921 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակվեց դեկրետ՝ հանրապետությունում անգրագիտության վերացման մասին։ Դեկրետի համաձայն, 16—50 տարեկան բոլոր անգրագետները պարտավոր էին գրագիտություն սովորել մայրենի լեզվով՝ հատուկ դպրոցներում։ Հենր սկզբից նշենք, որ անգրագիտության վերացման գործի առաջին և լուրջ խոչընդոտը նյութական միջոցների խիստ անբավարարությունն էր։ Լիկկայանները դժվարությամբ էին ձեռք բերում առաջին անհրաժեշտության գրպիտույքները, շատ տեղերում դրանք նույնիսկ բացակայում էին։ Ավելի վատ էր համապատասխան դասագրքերով ապահովելու գործը։ Այսպես, դեռևս 1922 թ. Երևանի գավառային գործադիր կոմիտեին ուղղված զեկուցագրում հայտնվում էր, որ «այն միջոցները, որոնք մինչև այժմ տրամադրվել են այդ նպատակին, բոլորովին չեն համապատասխանում այն խնդիրներին, որոնք դրված են նրա առջև»[3]։ Զանգեզուրի գավգործկոմի տարեկան հաշվետվության մեջ ասված է. «Մի քանի գյուղերում եղել են պահանջներ՝ լիկկայան բացելու համար, սակայն նյութական սուղ պայմանները ստիպել են գյուղացիների օրինավոր պահանջները մերժել»[4]։ Նման փաստերը քիչ չէին նաև մյուս գավառներում։ Այսպես, Դիլիջանում լիկկայաններ չէին գործում՝ ուսուցիչներին չվարձատրելու պատճառով։ Իհարկե, բերված փաստերը, որոնք հիմնականում վերաբերում են 1920-ական թվականներին, հասկանալի կարելի է։ Սակայն երբ նման փաստերի հանդիպում ենք 1930-ական թվականների արխիվային փաստաթղթերում, ապա պարզ է դառնում, որ անգրագիտության վերացման գործը պատ-

---

1 Հայ ժողովրդի պատմություն, բուհական դասագիրք, Երևան, 1980, Վ. Ղազանչյան, Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը, Երևան, 1964, Ա. Աբրահամյան, Ժողովրդական կրթության նվաճումները Սովետական Հայաստանում, Երևան, 1959։

2 Հայ ժողովրդի պատմություն, էջ 584։

3 Հայաստանի Հանրապետության Ազգային պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿԱ), ֆ. 133, ց. 1, գ. 153, թ. 27։

4 Նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 126, թ. 19։

շահ ուշադրության չի արժանացել ինչպես իշխանության բարձրագույն, այնպես էլ տեղական մարմինների կողմից։ Այսպես, 1932 թ. Հայաստանի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության նիստը, քննարկելով Լոռու, Փամբակի և Լենինականի գավառներում անգրագիտության վերացման ընթացքը, արձանագրում էր, որ «Շատ գյուղերում գրքերի սակասության հետևանքով պարապմունքները մինչև օրս չեն սկսվել»[5]։

Երբ սկսվում էին դաշտային աշխատանքները, շատ լիկկայաններ ուղղակի դադարում էին գործելուց։ Չկար ճկունություն՝ գործը աշխատանքից հետո կազմակերպելու համար, բացակայում էին շրջիկ լիկկայանները։ Այդ առումով բնութագրական է Ալեքսանդրապոլի գավառի Ղազանչիի շրջանային կոմիտեի 1923 թ. տարեկան հաշվետվությունից հետևյալ հաղորդումը. «Մարտ ամսվա ընթացքում ունեցել ենք 9 լիկկայան՝ 183 սովորողներով։ Նույն ամսի 15-ից բոլորն էլ աստիճանաբար քայքայվել են, քանի որ սովորողները գնացել են աշխատանքի»[6]։ Տարածված երևույթ էին նաև ունկնդիրների անկանոն հաճախումները։

1926 թ. անցկացված համամիութենական մարդահամարի արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանն իր գրագիտության աստիճանով 22,7%, բավական հետ է մնում միութենական մակարդակից։ Տեղերում անհրաժեշտ ուշադրություն չէր նվիրվում անգրագիտության վերացմանը, բացակայում էր հետևողականությունը։ Առանձին վայրերում անգրագիտության վերացմանը հատկացված գումարները ծախսվում էին այլ նպատակներով։ Այսպես, Հայաստանի լուսժողկոմատի 1929 թ. շրջաբերականում ասվում էր, որ անգրագիտության վերացմանը տրամադրված գումարները «տեղերում ծախսվում են այլ նպատակներով և լիկկայանները մնում են աղքատիկ վիճակում»[7]։

Լուրջ սխալ էր նաև այն, որ ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մարմինները անգրագիտության վերացման ընթացքի մասին վիճակագրական ճշգրիտ տվյալներ չէին հաղորդում։ Կենտրոն և կենտրոնից հաղորդվող տվյալները միշտ չէ, որ համապատասխանում էին իրական վիճակին և շատ դեպքերում նույնիսկ իրար հակասում էին։ Այսպես, 1928 թ. հունվարի 12-ին Հայաստանի կենտգործկոմի նիստում արձանագրվում է, որ գավառներից ստացված տվյալների համաձայն 1927 թ. գործել է 584 լիկկայան, սակայն առաջին իսկ ստուգումներից պարզվում է, որ իրականում դրանց թիվը եղել է 437, իսկ մնացած 147-ը չեն գործել զանազան պատճառներով[8]։ Մեղրու գավառի խորհուրդների 1924 թ. հունիսին կայացած համագումարում արձանագրված է, որ «նյութական միջոցների բացակայության պատճառով անգրագիտության վերացման աշխատանքներ չեն տարվել»[9]։

Անգրագիտության վերացման գործի լուրջ թերություններից մեկն էլ, այսպես ասած, վերևից պլանավորումն էր։ Կենտրոնից, առանց հաշվի առնելու տեղական պայմանները, իջեցվում էին անգրագիտության վերացման պլան-գրաֆիկներ։ Աշխատանքի այս համակարգը տեղիք էր տալիս տեղերում հավելագրումների և կեղծ զեկուցագրերի։ Իսկ շատ դեպքերում էլ այդ պլանները նույնիսկ թերակատարվում էին։ Այսպես, Ապարանի շրջանում 1931 թ. նախատեսված 124 խմբակի փոխարեն փաստացի գործել էին 95-ը, իսկ Ալավերդու շրջանում՝ 147 խմբակի փոխարեն բացվել էր ընդամենը 86-ը[10]։

---

5 Նույն տեղում, ֆ. 131, ց. 3, գ. 591, թ. 41։
6 Նույն տեղում, գ. 93, թ. 18։
7 Նույն տեղում, գ. 591, թ. 49։
8 Նույն տեղում, գ. 513, թ. 352։
9 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 800, թ. 163։
10 Նույն տեղում, գ. 1040, թ. 53։

Արխիվային փաստաթղթերն անառարկելիորեն ապացուցում են, որ շատ շրջաններում «կոնտրոլ թվեր» ապահովելու նպատակով լիկկայաններում ընդգրկում էին նաև անչափահասների։ Այսպես, Հայաստանի քաղաքական լուսավորության վարչության 1930 թ. դեկտեմբերի 10-ի նիստը ստիպված էր արձանագրելու, որ «մի շարք շրջանների լիկկայաններում ընդգրկվածների մեծամասնությունը անչափահասներ են»[11]։ Ուշադրության է արժանի նաև հետևյալ փաստը։ Լենինականի գավառի գործադիր կոմիտեի 1931 թ. մարտի 15-ի արձանագրության մեջ նշվում է, որ «լիկկայանների թույլ աշխատանքի հետևանքով թերակատարվել են նույնիսկ տարեկան պլանները»[12]։ Եվ անընդունելին այն է, որ հենց այդ նիստում որոշվում է ոչ ավել, ոչ պակաս ընթացիկ տարում (1931 թ.) գավառում անգրագիտությունը 100 տոկոսով վերացնել։ Իսկ թե ինչ էին իրենցից ներկայացնում այդ այսպես կոչված «կոնտրոլ-ստուդիչ» թվերը, նշենք, որ ամեն տարի շրջաններ էին իջեցվում հատուկ դիրեկտիվներ, որոնք նույնությամբ կրկնում էին մեկը մյուսին. նույն կտրուկ ոճը և որ ամենակարևորն է, դիրեկտիվը անպայմանորեն վերջանում էր այդ տարում անգրագիտությունը վերացնելու պահանջով։ Այսպես, 1931 թ. կենտրոնից իջեցված այդպիսի մի հրահանգ-դիրեկտիվում կարդում ենք. «Անգրագիտության և կիսագրագիտության վերացման ասպարեզում հիմնական դրույթ ունենալ նրա լիակատար վերացումը 1931—1932 ուս. տարվա ընթացքում»[13]։ Այստեղից էլ սոցիալիզմի հիմնական «նվաճումներից» մեկը՝ լոզունգներով և ագիտացիայով ժողովրդին հրամցնելը։ Դրանում մեզ համոզում են նաև հենց իրենց՝ կենտրոնական իշխանությունների արձանագրումները։ «Անգրագիտության վերացման շուրջ լայն մասսայականություն չի ստեղծված։ Աշխատանքները սահմանափակվում են միայն ագիտացիայով»[14],—ասվում էր Հայաստանի քաղլուսավարչության 1930 թ. դեկտեմբերի 10-ին կայացած նիստում։ Ընդհանրապես անգրագիտության վերացման գործը տեղերում «ակտիվանում» էր միայն այն ժամանակ, երբ վերևից ստացվում էին վերոհիշյալ կարգադրիչ-հրահանգները։

Անգրագիտության վերացման ի՞նչ «վճռական քայլերի» մասին կարող է խոսք լինել, երբ Նոր Բայազետի գավառի Ներքին Ադյամանի խորհուրդը 1927 թ. դեկտեմբերի 1-ին է հիշում անգրագիտության վերացման մասին, նշելով. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գյուղի բնակչության 90 տոկոսը անգրագետներ են, անհրաժեշտ է գյուղում բացել լիկկայան»[15]։ Իսկ եթե հավատալու լինենք Ղափանի շրջանի Ողջու գյուղական խորհրդի 1928 թ. հոկտեմբերի 17-ին կայացած նիստի արձանագրությանը, ապա խորհրդային իշխանության ութերորդ տարում միայն գյուղական խորհուրդը նպատակահարմար գտավ դիմելու գավառի քաղլուսավարին՝ գյուղում լիկկայան բացելու խնդրանքով, «որով կարող է բուժվել այնպիսի ցավոտ խնդիր, ինչպիսին անգրագիտությունն է»[16]։ Այս հարցն ավարտենք ևս մեկ փաստի հիշատակումով, այս անգամ արդեն հանրապետության բարձրագույն մարմնի՝ Կենտգործկոմի, 1932 թ. հոկտեմբերի 21-ին կայացած նախագահության նիստից։ Նիստը, քննարկելով Վեդու շրջանում քաղլուսավարական աշխատանքների հարցը, որոշման մեջ արձանագրում էր. «Շրջանում անգրագիտության վերացման խայտառակ վիճակը՝ շրջանում կան 6500 անգրագետներ և 4800 կիսագրագետներ»[17]։ Որոշման վերջում գրվում է, մեղմ ասած, անհավանական մի պահանջ. «Մինչև սկիզբ նոյեմբերի 1-ը բոլոր անգրագետներին և կիսագրագետներին ընդգրկել լիկկայաննե-

---

11 Նույն տեղում, ֆ. 131, ց. 3, գ. 591, թ. 42։

12 Նույն տեղում, գ. 600, թ. 84։

16 Նույն տեղում, թ. 87։

14 Նույն տեղում, գ. 591, թ. 41։

15 Նույն տեղում, ֆ. 586, ց. 1, գ. 101, թ. 43։

16 Նույն տեղում, ֆ. 132, ց. 1, գ. 605, թ. 7։

17 Նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 543, թ. 84։

ում»[18]։ Սակայն այս պահանջը ամենուր չէր իրագործվում։ Այսպես, օրինակ, միայն Դիլիջանի շրջանում 1930 թ. լիկկայաններում ընդգրկվել էին 9500 անգրագետներ[19]։ 1934 թ. հուլիսի 13-ին Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահությունը, քննարկելով հանրապետությունում անգրագիտության վերացման հարցը, արձանագրում էր, որ հանրապետությունում հաշվում են 102 հազար անգրագետներ և կիսագրագետներ։ Դժվար չէ նկատել, որ այս թիվը վկայում էր անգրագիտության վերացման գործում տեղ գտած ոչ քիչ սխալների ու թերությունների մասին։ Անգրագիտության վերացման գործում դեռևս անբավարար էր բացատրական աշխատանքների կազմակերպումը։ Ոչ բոլոր լիկկայաններն էին ապահովված շենքերով, վառելիքով ու գրենական պիտույքներով։ Այսպես, Հայաստանի լուսժողկոմատի 1929 թ. հրահանգում այդ առթիվ նշվում էր, որ «Մի շարք վայրերում լայն մասսայական կարծիք չի ստեղծված անգրագիտության վերացման և մասնավորապես բացված լիկկայանների շուրջ։ Տեղական մարմինները ակտիվորեն չեն աջակցում անգրագիտության վերացման գործին։ Շատ լիկկայաններում նստելիք, վառելիք չկա, մեկ այլ տեղում բացակայում են գրատախտակներն ու վառարանները...»[20]։ Նույնիսկ 1936 թ., երբ պետական բոլոր փաստաթղթերում արդեն խոսվում էր «սոցիալիզմի ճակատում» ձեռք բերված «մեծ նվաճումների» մասին, Հայաստանի պետական բարձրագույն մարմնի նույն թվականի մարտի 14-ի որոշման համաձայն 10 օրվա ընթացքում պետք է կազմակերպվեին անգրագիտության վերացման սեկցիաներ[21]։

Գորիսի շրջանային գործադիր կոմիտեն միայն 1936 թ. նոյեմբերի 3-ին է որոշում «անգրագիտության վերացման աշխատանքները ղեկավարելու համար ունենալ հաստիքային տեսուչ»[22]։ 1936 թ. դեկտեմբերի 18-ի շրջխորհրդի նիստի արձանագրության համաձայն Գորիսում դեռևս կային 1200 անգրագետներ և 2273 կիսագրագետներ[23]։ Իսկ ահա Ղափանի շրջանի Ողջի գյուղում 1936 թ. հաշվվում էին 205 անգրագետներ[24]։

Համատարած գրագիտության շրջանների թվում էր նաև Մեղրու շրջանը, սակայն շրջխորհրդի 1934 թ. հունվարի 4-ին նիստի որոշմամբ անց էր կացվելու անգրագիտության վերացման միամսյակ, որի ընթացքում լիկկայաններից դուրս մնացած անգրագետները պետք է գրագիտություն սովորեին[25]։

Անգրագիտության վերացման անբավարար վիճակի կարևոր պատճառը նաև լիկկայանների աշխատանքային ռեժիմի խախտումներն էին։ Այսպես, օրինակ, 1931 թ. մայիսի 29-ին Ստեփանավանի շրջանային խորհուրդը, քննարկելով շրջանում անգրագիտության վերացման աշխատանքների ընթացքը, նշում էր, որ դրա թերացման հիմնական պատճառներից են լիկկայանների ոչ ժամանակին բացվելը, անգրագետ կանանց դրանցում թույլ ընդգրկելը, ինչպես նաև սահմանված ժամկետից շուտ լիկկայանների աշխատանքի դադարեցումը։

Հայաստանում անգրագիտության վերացման դժվարություններից էր և այն, որ սկսած 1920-ական թվականներից պարբերաբար տեղի էր ունենում սփյուռքահայերի ներգաղթ։ Ներգաղթի նոր հոսք սկսվեց 1930-ական թվականների առաջին կեսին և առավել զանգվածային դարձավ հետպատերազմյան տարիներին։ Ներգաղթածների մեջ բավական թիվ էին կազմում

---

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, ց. 2, գ. 1050, թ. 23։

20 Նույն տեղում, գ. 591, թ. 39։

21 Նույն տեղում, գ. 641, թ. 1։

22 Նույն տեղում, գ. 671, թ. 72։

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 1286, թ. 2։

25 Նույն տեղում, գ. 1185, թ. 198։

անգրագետները։ Այդ հանգամանքը բացասական հետք էր թողնում անգրագիտության վերացման գործի վրա և հարկադրում էր մի շարք վայրերում, որտեղ անգրագիտությունը համարվում էր ավարտված, կրկին անդրադառնալ այդ հարցին։

Անգրագիտության վերացմանը մեծապես խանգարեցին նաև այսպես կոչված անհատական կցումները։ Այս ձևը ոչ միայն անարդյունավետ եղավ, այլև տեղիք էր տալիս նոր հավելագրումների և կեղծ զեկուցագրերի։ Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը համոզում է, որ հավելագրումների և տոնական այս զեկուցագրերի «հիվանդությունը» գալիս էր իշխանության ոչ միայն ստորին օղակներից, այլև վերևից՝ ընդհուպ մինչև կենտրոնական օրգանները՝ ժողկոմխորհ և կենտգործկոմ։ Այսպես, 1932 թ. հունվարի 11-ին Հայաստանի ժողկոմխորհի նիստի արձանագրության մեջ նշվում էր, որ Հայաստանի ազգաբնակչության անգրագիտության տոկոսը հասցված է տասի՝ հինգ տոկոս անգրագետներ և հինգ տոկոս կիսագրագետներ[26]։ Այնտեղ նաև ընդգծվում էր, որ «մի շարք տեղեր, այն է Երևանը, Ղափանը, Մեղրին հայտարարված են համատարած գրագիտության շրջաններ, իսկ մյուսները մոտ են այդպիսին համարվելուն»[27]։ Հետաքրքրականն այն է, որ հենց նույն արձանագրության մեջ հիշատակվում են մի շարք շրջաններ, որոնք «անհրաժեշտ նախաձեռնություն հանդես չեն բերել և չեն գլխավորել այդ բնագավառը»[28]։ Բնութագրական է նաև հետևյալ փաստը, 1931 թ. հուլիսի 11-ին Երքաղխորհրդի նախագահության նիստում հանդիսավորությամբ հայտարարվում է Երևանը համատարած գրագիտության քաղաք վերածվելու մասին[29]։ Իսկ ահա մեկ տարի անց՝ 1932 թ. սեպտեմբերի 11-ին, նույն քաղխորհրդի նիստում հանկարծ արձանագրվում է, որ «Երևանում եղած 16.116 անգրագետներից մնացել է միայն 406-ը»[30]։ Բայց ուշագրավը եզրակացությունն է. «Այս նշանակում է, որ Երևանը կառավարության և կուսակցության որոշումների կենսագործման շնորհիվ վերածվեց գրագիտության քաղաքի»[31]։ Ահա այսպես մեկը մյուսին հաջորդում էին տոնական զեկույցները, իսկ անգրագիտության վերացումն ընթացիկ տարվա պլանից տեղափոխվում էր հաջորդ տարվա պլան։

Կրկին դառնանք բուհական վերոհիշյալ դասագրքին։ Այնտեղ կարդում ենք. «Առաջին հնգամյակի. վերջում և երկրորդ հնգամյակում զգալիորեն բարելավվեց անգրագիտության վերացման գործի դրվածքը։ 1939 թ. մարդահամարի տվյալներով հանրապետության բնակչության 84 տոկոսը արդեն գրագետ էր»[32]։ Մեր ուսումնասիրությունները, սակայն, ցույց են տվել, որ այդ տոկոսը ուռճացված է։ Այդ են վկայում արխիվային բազմաթիվ նյութեր։ Այսպես, 1939 թ. հունվարի 5-ին Երքաղխորհրդի նախագահությունը, քննարկելով անգրագիտության և կիսագրագիտության վերացման ընթացքը, շրջանային խորհուրդներին հանձնարարում է 10 օրվա ընթացքում «կոնկրետ միջոցառումներ մշակել քաղաքում ստվար թիվ կազմող անգրագետներին գրագիտություն սովորեցնելու համար»[33]։ Դրանից առաջ՝ 1937 թ., Երևանում դեռևս հաշվվում էր մոտ 5 հազար անգրագետ և 4 հազար կիսագրագետներ[34]։ Մեկ այլ փաստարկ։ 1936 թ. կենտրոնական իշխանությունների տվյալների համաձայն, Հայաստանում ծրագրված է եղել գրագետ դարձնել 42 հազար անգրագետների և 60 հազար կիսագրագետների անգրագիտությունը։

---

26 Նույն տեղում, ֆ. 193, ց. 8, գ. 98, թ. 38։
27 Նույն տեղում։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում, ֆ. 197, ց. 7, գ. 3, թ. 62։
30 Նույն տեղում, ֆ. 197, ց. 8, գ. 6, թ. 177։
31 Նույն տեղում։
32 Հայ ժողովրդի պատմություն, էջ 584։
33 ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ. 197, ց. 7, գ. 45, թ. 2։
34 Նույն տեղում, ֆ. 197, ց. 8, գ. 9, թ. 129։

Սակայն պլանը խիստ թերակատարվել էր. գրագետ էին դարձել 25 հազարը, կիսագրագետ էին դարձել 27 հազարը[35]։ 1937 թ. հանրապետությունում դեռևս հաշվվում էին 104 հազար անգրագետներ և 100 հազար կիսագրագետներ[36]։ Նույնիսկ համեմատաբար զարգացած այնպիսի շրջանում, ինչպիսին Կիրովականն էր, 1939 թ. հունիսի 26-ին կային մոտ 9 հազար անգրագետներ և կիսագրագետներ[37]։ Ասենք նաև, որ անգրագիտության վերացման աշխատանքները համարյա թե դադարեցին այն բանից հետո, երբ Հայաստանի ֆինանսների և լուսավորության ժողկոմատների 1938 թ. փետրվարի 20-ի որոշմամբ վերացվեց լիկկայանների ֆինանսավորումը։

Այսպիսով, չժխտելով հանրապետությունում 1920—1940 թթ. անգրագիտության վերացման գործում կատարված դրական էական տեղաշարժերը, միաժամանակ, հարկավոր է ճշմարտացի գնահատել արվածն ու չարվածը և որ ամենակարևորն է, ճիշտ հետևություններ անել մեր ոչ հեռավոր անցյալի պատմությունից։

## ОБ ОДНОМ ВАЖНОМ ВОПРОСЕ «КУЛЬТУРНОЙ РЕВОЛЮЦИИ»

А. Ж. ОГАНЕСЯН

### Резюме

В школьных и вузовских учебниках по истории армянского народа, так же, как и в отдельных исследованиях, ликвидация неграмотности в Советской Армении представлена в довольно приукрашенном виде. Изучение архивных материалов позволяет дать объективную оценку вопроса о ликвидации неграмотности, который умалчивался десятилетиями, и выявить те ошибки и извращения, которые имели место в «осуществлении» этого процесса, а также доказать ложность и несоответствие многочисленных докладных действительности.

---

35 Նույն տեղում, ֆ. 112, ց. 4, գ. 529, թ. 3։

36 Նույն տեղում, ց. 2, գ. 69, թ. 23։

37 Նույն տեղում, ֆ. 113, ց. 4, գ. 9961, թ. 5։